

ՆԿԻՐՎՈՒՄ Է ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ 100-ՎՄՅԱԿԻՆ ՄԵԿՆԱԳՐԿԵԼ ԵՆ ԱՌՆՈ ԲԱՔԱԶԱՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ՎՄՅԱԿԻՆ ՆԿԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ



Արմ Բաքաջանյան

Արմ Բաքաջանյանի ծննդյան 100-ամյա հոբելյանի մեկնարկը նշվեց հունվարի 22-ին: Հայ մեծամունդ կոմպոզիտոր, դաշնակահար, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, պետական մրցանակների դափնեկրի հոբելյանական միջոցառումներն իրականացնելու համար ստեղծվելու է համակարգող կառավարական հանձնաժողով:

Նրա ծննդյան օրը, ՀՀ ԿԳՄՍ նախարարության ներկայացուցիչները, մտավորականները և երաժշտասերները հարգանքի տուրք մատուցեցին կոմպոզիտորի հիշատակին և ծաղիկներ խոնարհեցին նրա շիրիմին:

Այնուհետև, Կարապի լճի մոտ, Արմ Բաքաջանյանի հուշարձանի հարակից տարածքում տեղի ունեցավ միջոցառում, որի ընթացքում հնչեցին ամենաշերմ ու արտառուչ խոսքերը, հրաշալի ելույթներով հանդես եկան նաև դաշնակահարներ և երգիչներ, որոնց շնորհիվ այդ ամբողջ տարածքում թևածում էր մեզ՝ բոլորիս հարազատ ու արտամոտ բաքաջանյանական երաժշտությունը: Հնչեցին կոմպոզիտորի՝ «Վոկալիզ»-ը (կատարեց Ա. Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի մեներգչուհի՝ Արծվիկ Դեմուրյանը, նվագակցող՝ Արմեն Աղաջանյան), «Նոկլոյուն»-ը (կատ. «Մեկնարկ» տաղանդի զարգացման նպատակային ծրագրի միջազգային մրցույթների դափնեկիր, դաշնակահար՝ Արմեն Պուլիսյանը), «Մեղեդի»-ն (կատ. «Մեկնարկ» տաղանդի զարգացման նպատակային ծրագրի միջազգային մրցույթների դափնեկիր, դաշնակահար՝ Արթուր Գրիգորյանը): «Благодарю тебя» երգը իր մշակմամբ կատարեց ՀՀ վաստակավոր արտիստ, դաշնակահար Արմեն Բաքախանյանը:

2



Музыкально–культурная обстановка в Степанакерте



Передача Г. Меликсетян в дар колледжу диска с произведениями Рубена Саркисяна, книг А. Сарьян, Г. Меликсетян и М. Кокжаева. Степанакерт, март, 2016

3

ТРИ ЮБИЛЕА АРМЯНСКОЙ МУЗЫКАЛЬНОЙ КУЛЬТУРЫ



С.Гукасян, гость из Тегерана, Г.Хачикян, А.Хачатрян, А.Ордуханян (Германия), Ирэн Тертерян (внучка М.Мкртчяна), Г.Шагоян, супруги Питеджяны (Нью-Йорк). Поездка "Издательства ЕГК" в Гюмри, Дом-музей М.Мкртчяна, 23.09.2007

2021 год знаменателен для армянской музыкальной культуры тремя между собой тесно связанными событиями: 100-летний юбилей Ереванской государственной консерватории им. Комитаса, 25-летний юбилей международного журнала "Музыкальная Армения" и 15-летний юбилей газеты "Музыкант".

История ЕГК неразрывно связана с историей последних 100 лет нашей многотысячелетней страны. И поэтому в ее памяти имеются не только светлые и радостные, но и такие тяжелые воспоминания, как Великая Отечественная война, землетрясение 1988 года, развал Советского Союза в 1991 году и дестабилизация страны, инфляция и финансовый кризис, годы голода без отопления, газа, электричества и воды, волнения народа внутри страны, оборонительные войны вместе со многим другим и, наконец, ковид-19.

7

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ 29-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ


Դուցենս Առնոլդ Քոչարյանի դասարանական համերգը



Ռուանդ Սոֆոյան, Նարեկ Գյուրջյան, Ալբերտ Տիգրանյան, Արման Գրիգորյան, Լիլիթ Հակոբյան (կոնցերտմայստեր), Ալեքսան Խաչատրյան (մենակատար)

Դեկտեմբերի 29-ին, Երևանի պետական կոնսերվատորիայի դահլիճում տեղի ունեցավ համերգ՝ նվիրված Արցախյան պատերազմի մասնակից զինվորների հիշատակին: Համերգին մասնակցում էին կոնսերվատորիայի ակադեմիական երգեցողության բաժնի ուսանողներ՝ Ալբերտ Տիգրանյանը, Ալեքսան Խաչատրյանը, Ալսեկ Դավեյանը, Աննա Խաչատրյանը, Արամ Խաչատրյանը, Արման Գրիգորյանը, Գրիշա Մարտիրոսյանը, Մարիաննա Գևորգյանը, Նարեկ Գյուրջյանը, Ռուանդ Սոֆոյանը, Տիգրան Քախվելյանը, պրոֆեսոր Ալլա Գալուստյանի և դոցենտ Առնոլդ Քոչարյանի ղեկավարությամբ:

МАРГАРИТА РУХКЯН: ВРЕМЯ ЭДУАРДА АЙРАПЕТЯНА




Մարգարիտա Րухյան

Так называется книга музыкального критика, заслуженного деятеля искусств РА, доктора искусствоведения Маргариты Рухкян. К печати она была представлена по решению ученого совета Института искусств НАН РА. Она посвящена творческой деятельности одного из ярких представителей современной армянской музыки Эдуарда Айрапетяна. Вышла книга недавно в ереванском издательстве "Коллаж".

Маргариту Рухкян многие воспринимают не просто как талантливого и серьезного критика, но и как сильного и своеобразного представителя современной музыковедческой формации.

5

ԿԱՐԻՆ ՀԵԼԼՍԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ



Կարինե Հելլման-Գևորգյանը
հյուր «ԵՊԿ հրատարակչությունում»

Աշնանային մի պայծառ օր, Ստոկհոլմի կենտրոնում գտնվող հյուպերտ Սանտա Կլարա եկեղեցու համերգային ազդագրում տեսնելով հայի ազգանուն, որոշեցի անպայման ներկա գտնվել համերգին և ծանոթանալ երաժշտի հետ: Շվեդական եկեղեցիներում համերգներ տեղի են ունենում պարբերաբար և լավագույն երաժիշտների մասնակցությամբ:

Օգտվելով Ստոկհոլմում գտնվելու հնարավորությունից՝ առիթը բաց չէինք թողնում դուրս ելն ներկա գտնվելու այդ համերգներին, որոնք և՛ ժամրային, և՛ գործիքային բազմազանության տեսանկյունից շատ հետաքրքրական էին:

4

ՄԵԿՆԱԴՐԿԵԼ ԵՆ ԱՌՆՈ ԲԱՐԱԶԱՆՅԱՆԻ ԺՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ ՆԿԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

1 Իհարկե, դա վստահ և ռիսկային քայլ էր, կոմպոզիտորական մշակումների մակարդակին տիրապետելու՝ հարմոնիաներին, կոմպոզիտորական ոճին հարազատ մնալու փաստարկներով: Կատարողներին հարիր է իրականացնել փոխադրումներ, քան մշակումներ: Հավելենք, որ Ա. Բաբաջանյանական մշակումները կատարել է Մելիք Մավիսակալյանը՝ ստեղծելով շատ բարձրարժեք ֆանտազիա, պոպուրիներ: Հանդիպմանը ներկա էին, պաշտոնապես հրավիրված կոմպոզիտորներ և Հայաստանի կոմպոզիտորների միության անդամներ: Դա մեծ կոմպոզիտորի ծննդյան 100-ամյակի հոբելյանի մեկնարկ-համերգ մեծարումն էր: Եվ շատ պատասխանատու էին թե՛ կատարումները, և թե՛ ելույթները:

Հայ անվանի կոմպոզիտորներն իրենց հիացմունքն էին հայտնում թե՛ նրա երաժշտության, թե՛ նրա մարդ տեսակի և կերպարի հանդեպ:

«Միայն մեր ազգային միասնությունն է իր երաժշտության շուրջը: Իսկ ավելի շուրջով լինելը, թե ավելի պակաս... այս դժվարին օրերին մեր այս միասնությունն ինձ համար շատ կարևոր է, որ մենք կարողանանք վերագտնել մեր հորիզոնական, միմյանց հետ լինելու, թեկուզ սիմվոլիկ գնահատանքի խոսք ասելու, բայցև հասկանալու, որ մեր սրտի, հոգու մեջ ապրում է մեր պատմությունը, և մենք շրջված ենք հայացքով դեպի այդ պատմությունը: Քո անձնական երջանկությունը ուրիշ մարդու երջանկության մեջ է, ոչ թե քո երջանկության: Քո երջանկությունը ամբողջական է, երբ որ դիմացիդ մարդը նույնպես երջանիկ է: Իսկ կյանքը ճանապարհ է դեպի մեկ ուրիշ մարդը: Այսօր Առնոյի միջոցով մենք գալիս ենք մեկս դեպի մյուսը և պահպանում ենք մեր հոգու մեջ իր հզոր, հայոց հզոր տաղանդի ուժը», - ասաց կոմպոզիտոր Ռոբերտ Ամիրխանյանը:

Կոմպոզիտորների միության նախագահ Արամ Սաթյանն էլ ընդգծեց. «Առնոյի համար բոլորը բարեկամ էին, հարա-

զատ էին: Նա, եթե ինչ-որ մի բան անում էր, անում էր նվիրումով: Եթե սիրում էր՝ նվիրվում էր, եթե ստեղծագործություն էր գրում՝ նվիրվում էր, եթե ընկերություն էր անում՝ նվիրված էր իր ընկերներին: Ես չեմ հիշում մի դեպք, որ որևէ մեկը դիմեր Առնո Հարությունին, և նա օգտակար չլիներ: Իսկ իր ստեղծագործական արժեքը նա է, որ ինքը ժամանակի հետ մեկտեղ քայլում էր, ամեն մի ստեղծագործություն դա իր ժամանակի դեմքն էր»:

«Առնո Բաբաջանյան: Դրանով արդեն ամեն ինչ ասված է: Թե՛ երաժշտությունը, թե՛ անձը, թե՛ հայ լինելը, այդ ամուսնագանձուհի մեջ այդ ամեն ինչը ամբողջականացած է: Բաբաջանյանն իսկապես երևույթ է, բազմակողմանի օժտված անձնավորություն, որը մաս լավ նկարում էր, հետաքրքիր նկարչական լուծումներ ուներ: Բանաստեղծական փորձեր է արել... Նրա դաշնամուրի լիարժեք հնչողությունն անմոռանալի է: Եվ նրա ժպիտը, և՛ մի կիսակատակ-կիսափրիխոփայական արտահայտությունները, նույնպես տպավորություն են թողել ոչ միայն ինձ, այլ ամբողջ մի սերնդի վրա: Նրա երաժշտությունը մեզ հետ է, ուրեմն նա մեր մեջ է», - ասաց Բաբաջանյանի սերնդակից Մարտին Վարդապարյանը:

Նույն օրը, երեկոյան, «Արամ Խաչատրյան» համերգասրահում տեղի ունեցավ հոբելյանական համերգ: Ծրագրում ընդգրկված էին Առնո Բաբաջանյանի «Վեց պատկեր» դաշնամուրային շարքը, ջութակի և դաշնամուրի համար Սոնատը, ջութակի, թավջութակի և դաշնամուրի Տրիոն ստեղ-



Առնո Բաբաջանյանի ծննդյան 100-ամյա հոբելյանին նվիրված համերգ Կարապի լիճ, Ա. Բաբաջանյանի հուշարձանի մոտ, ԵՊԿ պրոֆեսոր, դաշնակահար Արմեն Բաբախանյան

ծագործությունները: Կատարումներով հանդես եկան ջութակահար Անուշ Նիկողոսյանը, թավջութակահար Սևակ Ավանեսյանը և ՀՀ վաստակավոր արտիստ, դաշնակահար Հայկ Մելիքյանը:

Նյութը պատրաստեց՝ ԳՐԶՈՐ ՇԱԳՈՅԱՆԸ

«ԵՊԿ հրասարակչության» հիմնադրման 17-րդ տարեդարձը հունվարի 28-ին Հայոց Բանակի տնի օրը «Չենփով պայքարենք հաևուն մշակույթի». Գ. Շագոյան)

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի 100-ամյակին



«Երաժշտական Հայաստան» ամսագիր #1 (5) 2002 թ



ԵՊԿ Գիտական խորհուրդը, երբ հիմնադրվեց «ԵՊԿ հրատարակչությունը», հունվարի 28-ին էր Հայոց Բանակի օրը, որը դեռ տոնական չէր հայտարարված, այլ՝ աշխատանքային: Այդպես զուգադիպություն է մաս, որ պարբերական

կյանքի և գործունեության ուղին:

Նա ծնվել է 1952 թ. հոկտեմբերի 24-ին: 1979-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի մեխանիկա-մաթեմատիկական ֆակուլտետը: 1987 թ. Էդիկ Ղաբուլյանը մշակում է հայկական տառատեսակներ: Մինչ օրս նա ստեղծել է մոտ 300 տառատեսակներ, բազմաթիվ գրքերի, ամսագրերի և թերթերի համակարգչային ձևավորման հեղինակ է: Իր որոշ տառատեսակների համար մշակել է ոչ միայն հայկական, այլև լատինական, կիրիլյան և հունական այբբենական համակարգերի գրանշանները: Նրա 26 տառատեսակ արժանացել են տարբեր մրցանակների՝ տեղական և միջազգային տառարվեստի մրցույթներում: 2004-ին հրատարակել է իր տառատեսակների «Հայկական համակարգչային տառատեսակներ» ալբոմը: 2017 թ. հրատարակվել է նրա երկրորդ «Տառատեսակներ» ալբոմը:

Նրա տառատեսակների ցուցանմուշները ցուցադրվել են Լիմբուլում, Լոնդոնում, Հեմփշիրում, Սանկտ Պետերբուրգում, Մոսկվայում, Մյունխենում և Բեռլինում, Ալեքսանդրիայում (Եգիպտոս), Բարսելոնում, Վարշավայում, Սեուլում, Բանգկոկում, Երևանում և Օշականում կազմակերպված ցուցահանդեսներում: Բեռլինում 2014-ին կայացել է Ե. Ղաբուլյանի տառատեսակների անհատական ցուցահանդեսը: Հայկական տառատեսակների նախագծմանը և տառարվեստին վերաբերող նրա հոդվածները տպագրվել են տարբեր ամսագրերում և թերթերում, այդ թեմաներով ելույթներ է ունեցել տարբեր միջազգային գիտաժողովներում և սիմպոզիումներում:

Ղաբուլյանի նախագծած երկու տառատեսակները՝ (GHEA Mariam և GHEA Grapalat) 2010 թվականին ՀՀ կառավարության կողմից ընդունվել են որպես Հայաստանի Հանրապետությունում պետական պաշտոնական գրագրության համար գործածման պարտադիր տառատեսակներ:

2010 թ. պարգևատրվել է Վազգեն Առաքելյանի անվան ոսկե մեդալով: 2012 թ., հայկական գրատպության 500-ամյակի կապակցությամբ Էդիկ Ղաբուլյանը ՀՀ Նախագահի կողմից արժանացել է Մովսես Խորենացու մեդալի: Նույն տարում պարգևատրվել է Մոսկվայի դիզայներների միջազգային միության Լև Յաշչենկոյի անվան ոսկե մեդալով՝ դիզայնի բնագավառում բացառիկ նվաճումների համար:

Էդիկ Ղաբուլյանը նախաձեռնել և հիմնադրել է «Գրանշան» ոչ լատինական տառատեսակների միջազգային ամեն-



Էդիկ Ղաբուլյան

նամյա մրցույթներն ու համաժողովները, «Գրանշանի» կազմկոմիտեի և մրցութային հանձնաժողովի համանախագահն է: Այնուհետև ամեն տարի Տառատեսակների միջազգային ասոցիացիայի համաժողովին զուգընթաց անցկացվում են իր տեսակի մեջ եզակի՝ «Գրանշան» միջազգային մրցույթն ու դրան նախորդող «Գրանշանի» հաղթող տառատեսակների ցուցահանդեսները:

Նրա՝ տառերով ստեղծած դիզայներական աշխատանքները 2015-ից ի վեր ցուցադրվում են կորեական KSBDA միջազգային դիզայներական ցուցահանդեսներում և տպվում հատուկ ավանախներում:

Լինելով ոչ լատինական տառատեսակների միջազգային մրցույթների կազմակերպիչ ու համանախագահող, 2012 թվականից հետո նա երբեք տառատեսակները չի ներկայացնել մրցույթների, բացառությամբ 2014 թ. ճապոնիայում անցկացվող տառատեսակների Մորիսավայի միջազգային մրցույթից, որտեղ լատինական անվանակարգում շահել է հասարակության ընտրության 2-րդ մրցանակ:

Խարկովի գեղարվեստի պետական ակադեմիայի Pangram, Մոսկվայի դիզայներների միջազգային միության «Զոլոտայա բլախա» միջազգային մրցութային հանձնաժողովների անդամ է:

Էդիկ Ղաբուլյանը դասավանդում է տառարվեստ՝ Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում:

ԳՐԶՈՐ ՇԱԳՈՅԱՆ
Երաժշտագետ, «ԵՊԿ հրատարակչության» բաժնի վարիչ, «Երաժշտական Հայաստան» ամսագրի հիմնադիր-գլխավոր խմբագիր

Музыкально–культурная обстановка в Степанакерте



1

Новый 2020–й учебный год стартовал в Степанакертском музыкальном колледже им. Саят–Новы раньше официально объявленного срока – был снят корона–вирусный карантин. Не дожидаясь 14 чис–ла, с первых же дней сентября подтяну–лись студенты из районов; педагоги ра–ботали по утвержденному графику. Масочный режим в учебных заведениях был отменен. Мы подшучивали, что карабахцев даже коронавирус побаивается и обходит сто–роной. Жизнь шла своим чередом...

27 сентября навсегда войдет в историю армянского на–рода черной датой. Ранним солнечным воскресным утром над городом раздалась залпы огневых орудий. Сразу было ясно, что обстановка более чем серьезная. Что могли предпринять родители в ситуации, когда город подвергает–ся бомбежке, а дети спят или больные, прикованы к посте–ли? Паники, как таковой, не было. Довольно быстро все спустились в подвал. А через минуту раздался сильный грохот: снаряд попадает в квартиру на первом этаже. Благо, как потом объяснили строители, тонкие стены не оказали нужного сопротивления, и снаряд, искорежив две квартиры, не взорвался. Несмотря на то, что обстрел города велся беспорядочно, МЧСники оперативно сработали и обезвре–дили снаряд. В этот день соседскому мальчику исполни–лось 9 лет. Свечи на большом торте Вовка задул в подвале под общие поздравления...

В подвале я с дочерью прожила три дня. 1 октября мы уже ехали по дороге, ведущей в Армению. Дорога напоми–нала фильм–апокалипсис. По узкой горной дороге в одном направлении тянулась вереница машин с бригадой скорой

помощи (в один рейс я сосчитала 16 машин), машины с гу–манитарной помощью. Тысячи добровольцев со всей Ар–мении, следуя зову сердца, прибывали в Арцах ценой жиз–ни отстоять Родину. А в другую сторону передвигалась ко–лонна с женщинами и детьми. Люди, всю жизнь обустраи–вающие свои дома, землю (трудолюбие – одна из национа–льных черт) уносили с собой лишь немного еды. Оуще–ния безысходности не было. Мы твердо были убеждены, что как бы ни было тяжело, все равно мы все преодолеем, и в скором времени жизнь войдет в прежнее русло. По пути нас останавливали местные парни и участливо предлагали помощь: найти квартиру, дом, устроить нас, если нет знако–мых. Сотни незнакомых людей со всей Армении протянули руку помощи и предоставили кров людям, очутившимся, казалось, в безвыходной ситуации; сотни людей организо–вали помощь прибывшим продуктами питания и предмета–ми первой необходимости. Помогали всем, чем могли. Хочу поблагодарить педагогов Ереванской государственной консерватории им. Комитаса Аветисян Нарине Завеновну, Мовсисян Цовинар Грайровну, Шагоян Гоар Карленовну, а также Погосян Рипсима Гарниковну за поддержку и внима–ние, оказанное моей семье. Благодарю Эдгара Гагикевича Гянджумяна, директора Школы искусств им.Х.Кушнаряна, за доброту и отзывчивость. Нас окружили теплом, заботой, участием, и это поддерживало. А в горле стоял ком, на глаза наворачивались слезы, безответным оставались вопросы: почему погибают люди, нельзя ли было предотвратить во–енную агрессию? Что произошло дальше, и к чему это привело, всем нам известно... Тысячи павших, отдавших свои жизни за Родину – Честь и Слава Героям... Сотни ре–бят, пропавших без вести... Тысячи семей, потерявших на войне близких, вынужденных оставить свои очаги, могилы

предков... Боль и обида не отпускают по сей день.

К концу ноября народ стал постепенно возвращаться в свои дома. Вернулись и те, кто потеряли родных, потеряли отеческий дом, непосильным трудом нажитое добро. Воз–вращались, преодолевая боль и апатию ...

Постепенно возобновилась работа городского тран–спорта, сферы обслуживания населения, библиотек, боль–ниц, хлебопекарен, кафетериев; подключили электричест–во, восстановили интернет (хотя, как это бывает после во–енных действий, до сих пор случаются перебои с подачей электроэнергии и связи).

Приступили к занятиям и образовательные учреждения районов, а также города Степанакерта: средние и старшие общеобразовательные школы, Детская музыкальная школа им. Комитаса, Детская школа искусств им. Гюрджяна, Центр Детско–юношеского творчества, Детско–юношеская спор–тивная школа, спортклубы, Центр инновационных техноло–гий ТУМО, ПТУ, дошкольные учреждения, медицинский кол–ледж, хореографический колледж, музыкальный колледж, Арцахский государственный университет, Университет им. Нарекаци, Университет им. Месропа Маштоца и другие. Улицы и дома, пострадавшие во время войны, приводятся в порядок; чистота и уют по–прежнему характеризуют Сте–панакерт – нашу красавицу столицу.

Я желаю своему народу выдержки, терпения, благополу–чия. Народ наш потрясающий, он обязательно преодолеет невзгоды. Молодежь (с большой буквы) наша золотая – и это наше бесценное богатство. И именно Они построят лучшее будущее – достойное их самих.

НИНА ВЛАДИМИРОВНА АКОПЯН,
музыковед,
Степанакерт



Степанакерт до Арцахской войны, 2020



Музыкальный колледж им. Саят–Новы. Степанакерт, январь 2021



Музыкальная школа Степанакерта после Арцахской войны январь 2021

Ոչ ոք չի մոռացվել, ոչ ինչ չի մոռացվում

Տարին անբարենպաստ եղավ այն տեսակետից, որ հան–կարծակի ու անսպասելի ցնցումով թեքվեց կյանքի սովորա–կան ուղին: Համաշխարհային համաճարակը շատ կյանքեր խլեց: Մեր երգչախումբը նույնպես ծանր կորուստ ունեցավ: 2020 թվականի հոկտեմբերի 26-ին կյանքից անսպասելի հե–ռացավ ԵՊԿԵ-ի հիմնադիր, գեղարվեստական ղեկավար, մեր հարազատ մանետոր Յարություն Թովհիկյանը: Տարվա կտր–վածքով երգչախումբը բազմաթիվ ծրագրեր ուներ: Չնայած անհաղթահարելի թվացող անհարմարությունների՝ Կամերա–յին երաժշտության տան ղեկավարության հովհանու և երգ–չախմբի տնօրեն Վիլի Վայների կազմակերպչական հնտու–թյունների շնորհիվ, երգչախմբի աշխատանքը համակարգվեց: ԵՊԿԵ-ն առցանց մասնակցեց «Միասին XXI դարում» բուլղա–րական միջազգային փառատոնին և արժանացավ ամենա–բարձր «Գրան Պրի» մրցանակին: Փառատոնն անցկացվել է 39 երկրի մասնակցությամբ: «Գրան Պրի» մրցանակ շնորհվեց նաև կոմպոզիտոր Վիլի Վայներին: Դեկտեմբեր ամսին, Ամերի–կայի հայկական թանգարանում կայացած Ամանորյա համեր–գին, երգչախումբը նույնպես մասնակցեց առցանց ձևաչափով:

Տարին հոբելյանական էր: Նշվում էր հայ դասական երաժշ–տության երախտավորի՝ Էդգար Հովհաննիսյանի ծննդյան 90-ամյակը և այդ առիթով ԵՊԿԵ-ն շահել էր պետական գրանտ՝ կոմպոզիտորի խմբերգերը ձայնագրելու համար: Ուրախու–թյամբ պետք է նշեն, որ երգչախումբը բացառիկ համախմբվա–ծությամբ և անմեղուն համերգությամբ ավարտին հասցրեց Հ. Թովհիկյանի սկսած ձայնագրությունը:

Ներկան միշտ հունձքն է անցյալի: Վեց անգամ տաս տարի–ներ ի վեր մանետոր Թովհիկյանը ցուցադրել է իր ներսի նկար–չին, ով հնչյուններից զույներ էր ստանում ու զարդարում իր պատկերացրած կտավը: Վերջին կտավը, նվիրվածությամբ ավարտին հասցրեց երգչախմբի հիմնադրման օրից Մանետ–որի կողքին կանգնած արժանավոր երաժիշտ՝ խմբավար Քրիստինա Ոսկանյանը: Երկու ճաշակներ դարձան մի արտա–հայտություն՝ ձայնակազմակերպի տեսքով: Այժմ ավարտական փուլում են տպագրման աշխատանքները և ոչ հեռու ապագա–յում ունկնդիրը հնարավորություն կունենա մտերմանալ Է.Հով–հաննիսյանի խմբերգային երաժշտության հետ: Ինչպես մոլե–ռանդ հավատացյալ Յարություն Թովհիկյանը նվիրվեց երաժշ–տությանը, թողեց շուշափելի լսելիությունն իր աշխատանքի և շուրջ անձի:

ԱՆԱԴԻՏ ՆԱԶԱՐԵԹՅԱՆ

Դիրիժոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Յարություն



Երևանի պետական կամերային երգչախումբ, հիմնադիր, գեղարվեստական ղեկավար Յարություն Թովհիկյան, երգչախմբի տնօրեն Վիլի Վայներ

Թովհիկյանի դիրիժորական գործունեությունն սկսվել է դեռևս 1976 թ.: Հայաստանի հեռուստատեսության և ռադիոյի կամե–րային երգչախմբի ղեկավարությամբ: 1973-ին ավարտել է Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիան: 1982 թ. արժանացել է Հայաստանի Լենինյան կոմերիտմիու–թյան պետական մրցանակի: 1983-1991 թթ. ղեկավարել է Երևանի պետական համալսարանի «Կոմիտաս» երգչախում–բը, որը մեծ հաջողությամբ հանդես է եկել միջազգային ասպա–րեզում: 1987 թ. Լիտվայի Կաունաս քաղաքում տեղի ունեցած UVENTUS հեղինակավոր մրցույթին, 19 միութենական երգ–չախմբերի մեջ «Կոմիտասը» գրավել է առաջին տեղը: 1989-1991 թթ. Թովհիկյանը եղել է BRIDGES OF SONG միջազգային փառատոնի կազմակերպիչ-անդամ: 1991 թ., Տալլին մայրաքաղաքում (Էստոնիա) կայացած BRIDGES OF SONG TALLINN 91 փառատոնին արժանացել է 20.000-ամոց երգչա–խումբը ղեկավարելու պատվին՝ կատարելով «Հայրապետա–կան օրհներգը»: 1991-1994 թթ. Բեյրութում (Լիբանան) վերա–կազմավորել և երգչախմբային կատարողական արվեստի նոր բարձունքի է հասցրել Բարսեղ Կանաչյանի հիմնած «Գուսան» երգչախումբը: 1996 թ. Յարություն Թովհիկյանի կողմից հիմ–նադրված Երևանի կամերային երգչախումբը, կարճ ժամանա–կահատվածում նվաճել է իր ուրույն տեղը հայ երաժշտական հանրության շրջանում, ճանաչվելով Հայաստանի հեղինակա–վոր կատարողական կոլեկտիվ և 2009 թ. ստացել է պետական կարգավիճակ, վերանվանվելով Երևանի պետական կամերա–յին երգչախմբի (ԵՊԿԵ): 2000 թ. Գլենդելում կայացած 3-րդ

ամենամյա հայկական երգի մրցանակաբաշխության ժամա–նակ «Լավագույն ավանդական պլան» մրցանակը շնորհվել է Երևանի պետական կամերային երգչախմբի «Կոմիտաս Վար–դապետի երգերը» սկավառակին: Երգչախմբի՝ Թովհիկյանի դիրիժորությամբ շատ ձայնագրություններ արխիվացված են Հայաստանի հանրային ռադիոընկերության ֆոնդում:

2012-ից ղեկավարել է «Մխիթար Սեբաստացի» կրթաիա–մալիրի ուսուցչական կազմից բաղկացած «Սեբաստացիներ» երգչախումբը: Երգչախումբը հանդես է եկել գործող և խո–նարհված եկեղեցիներում, այլ հուշարձանների և թանգարան–ների տարածքներում, գյուղական, քաղաքային հրապարակ–ներում, համերգային դահլիճներում՝ նպաստելով մանկավար–ժական երգչախմբերի ստեղծմանը: Մանետոր Յարություն Թո–վիկյանը հաճախակի համագործակցել և նպաստել է երիտա–սարդ ժամանակակից կոմպոզիտորների խմբավարական ստեղծագործությունները ներկայացնելուն: Արվեստում ունե–ցած իր նշանակալի ներդրման համար, Թովհիկյանը բազմիցս արժանացել է պետական պարգևների՝ ՀՀ Վարչապետի հուշա–մեդալի, ՀՀ մշակույթի նախարարության երկու ոսկե մեդալե–րի, Երևանի քաղաքապետարանի «Երևան» մեդալի: 2013 թ. նրան շնորհվել է ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ կոչում: 2014-ից «Հայ երգչախմբային դիրիժորների ասոցիացիա» հա–սարակական կազմակերպության անդամ էր:

Խմբագրական

ԿԱՐԻՆ ՀԵԼԼՍՂՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

1

Համերգից հետո, վերջապես, տեղի ունեցավ մեր հանդիպումը. երկու հայ երաժիշտների՝ Նույն հոգևոր արժեքները կրող, հետաքրքրությունների գրեթե միևնույն շրջանակն ունեցող մարդկանց միջև, և արդեն տևական ժամանակ է, որ մենք կապված ենք անկեղծ զրույցներով, արվեստի և արվեստի մարդկանց նկատմամբ ունեցած վերաբերմունքով, երաժշտության մեջ լինելու բնությունից տրված մեզ առաքելությամբ:

Եվ այսպես, մեր հայրենակցուհի, դաշնակահար-կոմպոզիտոր Կարին Չելլման-Գևորգյան:

Կարին Չելլման-Գևորգյանը շվեդահայ դաշնակահարուհի է: 1985 թ. ավարտել է Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի դաշնամուրային բաժինը, անցել է կոմպոզիցիայի դասընթացներ Էդվարդ Միրզոյանի, Ալեքսանդր Աճեմյանի դասարաններում: Դեռևս մանուկ հասակում, Կոմիտասի անվ. երիտասարդ շնորհալիներին նվիրված մրցույթում արժանացել է առաջին մրցանակի:

Դաշնակահարուհին իր գործունեության ընթացքում համոզես է եկել որպես մենակատար, կամերային երաժիշտ, կոնցերտմայստեր:

1991-ից բնակվում է Շվեդիայում և ծավալում համերգային գործունեություն Սկանդինավյան երկրներում, Ֆրանսիայում և Ռուսաստանում: Նույն թվականին Փարիզի ազգային կոնսերվատորիայում տեղի ունեցած դաշնակահարների միջազգային մրցույթում արժանացել է երկրորդ մրցանակի: 2001 թ. Կ. Չելլման- Գևորգյանը Լև Նաումովի (Համովեր) մոտ անցել է վարպետության դասեր, 2004-2006 թթ. Զալցբուրգի Մոցարտի անվ. ամառային ակադեմիայում մասնակցել է դասընթացների Հանս Լեյգրաֆի, Ռոբերտ



Կարին Չելլման-Գևորգյան, Էդվարդ Միրզոյան, Ելենա Միրզոյան, Սոնա-Մարիա Չելլման

Լևինի, Նորման Շետլերի և կոմպոզիցիա՝ Ալեքսանդր Մյուլենբախի մոտ:

Կ. Չելլման-Գևորգյանն արևմտաեվրոպական կոմպոզիտորների ստեղծագործություններից կազմված մի քանի համերգային ծրագրերի նախագծեր է իրականացրել Շվեդիայում, Դանիայում, Նորվեգիայում, Ֆինլանդիայում և Ֆրանսիայում, հեղինակ է դաշնամուրի, ծայրի և նվագախմբի համար բազմաժանր ստեղծագործությունների:

Ճակատագրի բերումով (պատճառը սերը և ամուսնությունը էր շվեդ պատմաբան Թոմմի Չելլմանի հետ) արդեն քսանութ տարի բնակվում է Ստոկհոլմում: Երաժիշտը հաջողությամբ համատեղում է համերգային գործունեությունը և ընտանեկան կյանքը: Ունի երկու հրաշալի զավակ, որոնք Նույնպես զբաղվում են երաժշտությամբ: Ի դեպ որդին՝ Յոհաննես, պրոֆեսիոնալ երաժիշտ է, նվագում է վեկ լիռա և ծավալում ակտիվ համերգային գործունեություն ոչ միայն Շվեդիայում, այլև նրա սահմաններից դուրս: Դուստրը՝ Սոնա-Մարիան, երաժշտությունից բացի զբաղվում է լուսանկարչությամբ, ուսումնասիրում արվեստի պատմություն: Երկու զավակներն էլ գրում, կարդում և խոսում են հայերեն:

Անչափ մեծ է ամուսնու՝ Թոմմիի դերը, ներդրումը, օտար միջավայրում Կարինի կայացման գործում, ով իր ուղին հարթել է բացառապես իր երաժշտական օժտվածության շնորհիվ:

Շվեդ կոմպոզիտոր Էբերհարդ Այսերը գրում է. «Կարին Չելլման-Գևորգյանին առիթ էր ունեցել ճանաչել որպես փայլուն դաշնակահարուհի, որպես համերգային արտիստ և մրբազգաց կոնցերտմայստեր: Ներկա են եղել նրա բազմաթիվ համերգներին, հնարավորություն ունենալով ծանոթանալ նրա ստեղծագործություններին: Նա մեծ ունակությունների տեր ստեղծագործող է՝ ոչ ավանգարդ դասական մտածողությամբ: Բացի այդ, Կարինն իր երկրի՝ Հայաստանի երաժշտական ավանդույթների հետ է ծանոթացրել մեզ՝ հայ կոմպոզիտորների գործերը կատարելով Շվեդիայում և այլ երկրներում»:

Որպես համերգային կատարող, Չելլման-Գևորգյանը համաշխարհային դասական կոմպոզիտորների, շվեդ կոմպոզիտորների ստեղծագործությունների կողքին մշտապես հնչեցնում է նաև հայ կոմպոզիտորների, ինչպես նաև իր ստեղծագործությունները, սակայն այս ամենն անում է նրբանկատորեն և զգույշ: Մեծամասամբ Չելլման-Գևորգյանի աշխատանքի շնորհիվ է, որ հայ կոմպոզիտորների գործերը

նախ հասանելի, հետո թանկ և սիրելի են դառնում սկանդինավյան ուկնդրի համար:

Կարին Չելլմանը փայլուն դաշնակահարուհի է: Նա կարողանում է իր կատարումներով գերել ուկնդրին: Դաշնակահարուհու կատարումները աչքի են ընկնում բարձր կուլտուրայով, տեմբրային գույների մրբաճաշակ բազմազանությամբ: Լինելով կամերային երաժիշտ՝ նա կարողանում է կապ հաստատել դաշիլճուն նստած յուրաքանչյուր ուկնդրի հետ, և այս է պատճառը, որ նա ունի իր մշտական ուկնդիրը և երկրպագուները:

Երաժշտի պրպտուն միտքն անընդհատ որոնումների և նոր ծրագրեր իրականացնելու մեջ է: Նրա ծրագրերից մեկը նվիրված էր մեծն Կոմիտասին, ով երաժշտի կուռքն է: Սիա ինչ է գրում Կ. Չելլման-Գևորգյանը. «Դեռ շատ փոքր էի, երբ ամառվա ամիսներին դպրոցական արձակուրդներս անց էի կացնում Նախիջևանի շրջանի Ցոլմա գյուղում՝ պապիկսի և տատիկսի մոտ: Հիշողությանս մեջ վառ են մնացել ամառային երեկոները, երբ ցղնեցիները աշխատանքից հետո, ինչպես նաև գյուղում հանգստացողները, երեկոյան զբոսանքի էին դուրս գալիս, շփվում միմյանց հետ, զրուցում, կարծիքներ փոխանակում... հիշում են նաև գյուղի մեծ ակումբը, որի բեմում չորս տարեկանում կայացավ իմ առաջին ելույթը, մեր եկեղեցին, որի շրջակայքում երեխաներով զբոսնում էինք, շուրջպար բռնում, դիմավորում սարերից եկող գառնուկներին, քանդված տների պատերի կիսապատուհանների միջով ելումուտ անում, պահմտոցի խաղում... և դրանք Կոմիտասի պապերի քանդված տներն էին...»

Երեկոյան աստղային երկնքի գեղեցկությունը լրացվում էր ծղրիղների երգով, լուսատիտիկների փայլվումը լույսե-



Կարին Չելլման-Գևորգյանի «Սոնա-Մարիա» մոտային ժողովածուն՝ պարտիտուրա 2 սոպրանոյի և դաշնամուրի նաև սոպրանոյի, տենորի և դաշնամուրի համար, Նվիրվում է իր դստերը՝ Սոնա-Մարիա Չելլմանին

րով: Ականջդ էր շոյում դուդուկի անուշ մեղեդին:

Կարապետ պապիկս իր ընկերների հետ գետակի ափին նստած նվագում և Ցոլմա գյուղը լցնում էր հաճելի մեղեդիներով: Դուդուկի ծայրին պատասխանում էին կլարնետի հնչյունները, և շատերը չգիտեին, որ այդ գուլալ մեղեդիները ժամանակին ժողովրդից վերցրել, զտել, մշակել և վերադարձրել էր Կոմիտաս վարդապետը: Կոմիտասն ապրել, ապրում է և կապրի հավերժ»:

Երաժշտի ուշադրության կենտրոնում են և՛ համաշխարհային դասականների, և՛ հայ կոմպոզիտորների հոբելյանները, և՛ պատմական թեմաները:

Մի քանի իրականացված և շարունակական ծրագրերի մասին.

- Կանանց միջազգային օրվան նվիրված, անդրադարձ մեծ կոմպոզիտորների կանանց. Բախի՝ Աննա Մագդալենա Բախ, Ռոբերտ Շումանի՝ Կլառա Վիկ Շուման, սկանդինավյան կոմպոզիտորների կանանց... և այլն:
- Յոհան Սեբաստիան Բախի 333- ամյակ (2018 թ.):
- Ֆրանց Շուբերտ 222-ամյակ (2019 թ.):
- «Կենդանիների աշխարհը երաժշտության մեջ»:
- «2 անգամ 100», նվիրված Էմիլեդե եկեղեցու 100-ամյակի և Հայոց Ցեղասպանության 100-ամյակին (2015 թ.):
- «Այլ երկիր, այլ երաժշտություն» անչափ հետաքրքրական ծրագիր, դարձյալ նվիրված Հայաստանին:
- Պատմական թեմայով. «Napoleon Bonapart»:
- «Յոզեֆ Շտրաուս»՝ միակ դաշնակահարը Շտրաուսների ընտանիքում:
- «Երաժշտական ճանապարհորդություն երկրների միջև», և այլն:

Դաշնակահարուհու արվեստն օժտված է ներթափանցելու մեծ ուժով. նա կարողանում է դաշիլճը գերել իր կատարումներով, անկախ այն հանգամանքից հնչեցնում է Բախ,



Ռախմանինով, Թյուռե Ռանգստրոմ, Էռլանդ Ֆոն Քոխ, թե հայ կոմպոզիտորների գործեր. Կոմիտաս, Խաչատրյան, Միրզոյան, Զքյան:

Բազմաթիվ են Կարինի ստեղծագործական համագործակցությունները թե՛ սկանդինավյան, թե՛ ռուս երաժիշտների հետ (Ինգրիդ Տոբիասոն, Յուսսի Բյոռլինգ, Մարկ և Իգոր Տայմանով, Նիլս Էրիկ Սպարֆ, Էլիզաբեթ Վոլշտեյն, Սաբին Բեյեռ, Գեմադի Բեգուբենկով, Ինգոմար Ռեյնեռ, Սոֆիա Նիկլասոն, Քրիստինե Վիկմարկ, Գաբրիել Սուլվանեն ... և այլք), թե՛ իր իսկ կողմից հրավիրված հայ երաժիշտների հետ Հերմինե Երիցյան (երգչուհի, Ֆրանսիա), Սվետլանա Նավասարդյան (դաշնակահար, ՀՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր, Պետական մրցանակի և միջազգային մրցույթների դափնեկիր), Մարինե Դեյնյան (ՀՀ վաստակավոր արտիստուհի, Ա. Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի մեներգչուհի), Պերմ Բարազյան (Ա. Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի մեներգիչ), Լևոն Զավադյան (դաշնակահար, Ա. Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի երիտասարդ օպերային երգիչների դեկավար) և այլք հետ:

Ըստ իս, Կարին Չելլման-Գևորգյանը կատարում է շատ շնորհակալ գործ և ինչպես գրում է Սվետլանա Նավասարդյանը. «Հայաստանում հասակ առած, այնուհետև Ստոկհոլմում հաստատված դաշնակահարուհին, հայ երաժշտության դեսպանն է Շվեդիայում, որի ջերմեռանդ և բազմաթիվ ուն գործունեությունը լավագույնս նպաստում է երկու մշակույթների մերձեցմանը, կամուրջ գցում փոխհարստացնող համագործակցման համար ...»:

Վերջին շրջանում մեծ է երաժշտի ցանկությունը՝ ավելի հաճախ լինել Հայրենիքում, ներկայացնել իր ստեղծագործությունները հայ ուկնդրին: Հայաստանում Կարինն ճանաչում են որպես դաշնակահարուհի և կոնցերտմայստեր, ինչպես նաև նրա վարպետության դասերը՝ նվիրված շվեդ կոմպոզիտորների ստեղծագործություններին:

Հուրախություն կոմպոզիտորի, ում գործերը բավական հաճախ կատարվում են Ստոկհոլմում, հնչեցին նաև Երևանում՝ Ա. Խաչատրյանի տուն-թանգարանում, որտեղ երիտասարդ երգիչների կատարմամբ (դեկավար՝ Լևոն Զավադյան) հնչեց նրա «Նոր տարվա սիրուն ծաղիկ, դու մեր զարդն ես Ձյուն ծաղիկ» ստեղծագործությունը, նվիրված դստերը՝ Սոնա-Մարիա-Ալեյաիդային: Ուկնդիրները ջերմ ոգևորությամբ ընդունեցին հետաքրքիր մտածողությամբ գրված այս գողտրիկ ստեղծագործությունը: «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոնի բացման ընթացքում Հայաստանի կամերային նվագախմբի դիրիժոր Ռուբեն Ասատրյանի մեկնաբանմամբ հնչեց Կարին Չելլմանի «Պալանդա» կամերային սյուիտը:

- Ինձ համար հաճելի է լինել հայրենիքում, կարոտս առնելուց բացի յուրաքանչյուր անգամ նոր լիքը և ոգեշնչում են ստանում, ինչը շատ կարևոր է ստեղծագործական գործունեության համար, - հարցազրույցներից մեկում ասել է Կարին Չելլմանը:

Եզրափակելով, ցանկանում են ևս մեկ անգամ շեշտել այս կրկնվող, բայց ճշմարտացի նախադասությունը. որտեղ էլ ապրենք և ինչպիսի հաջողությունների էլ հասնենք՝ մենք բոլորս էլ կարիքն ունենք մեր հարազատների և հայրենակիցների խրախուսանքին:

ՍՈՒՄԱՆԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ
դաշնակահարուհի, ԵՐՊԿԳՄ դասախոս
Ստոկհոլմ - Գյումրի

МАРГАРИТА РУХКЯН: ВРЕМЯ ЭДУАРДА АЙРАПЕТЯНА

1 Она яркий тип современно мыслящего музыковеда, для которого гражданский темперамент, эрудиция имеют не меньшее значение, чем непосредственно музыковедческое освоение материала.

Ее перу принадлежат монографии, научные статьи, очерки, посвященные композиторам Авету Тертеряну, Левону Чаушяну, Ваграму Бабаюну, Рубену Саркисяну, Ерванду Еркяну, Давиду Сакояну, Константину Петросяну, Вардану Аджемяну. Она автор множества статей, рецензий, посвященных премьерам произведений армянских композиторов, весомых научных статей, опубликованных как в республике, так и в Москве, Санкт-Петербурге, получивших высокую оценку в научных кругах. Редкое сочетание непосредственной талантливости и трезвоаналитического, даже рационального начала всегда сообщало работам Маргариты Ашотовны будоражащий гражданский пафос, пронзительную современность, не переходящую, тем не менее, в плоскую злободневность.

Ее творческий путь во временном пространстве словно корабль с алыми парусами. Но она держала паруса открытыми при весьма ветреной жизненной погоде. Несмотря на кажущуюся беззащитность, все бури своего времени М. Рухкян выдержала стойко.

И сегодня она, как одинокий воин, понимает, что ее битва почти безнадежна, но не отступает. Для нее принять вызов – смысл существования. Давно ведь уже звучат стенания, что музыкальная критика почти вымирает, в популярных СМИ ей практически нет места, да и на массовое сознание ее влияние мало заметно. Факт этот оспорить трудно, хотя повод для возмущения есть: ведь заживо хоронят вполне активный феномен. Возможно, в шумных политических дебатах музыкальная критика не всем видна, но без нее радующая глаз зелень давно бы задохнулась и была бы выкорчевана с корнями. Статьи и публикации М. Рухкян – образец той критики, которая вопреки всем кризисам остается стойкой, образной, дающей пищу уму.

Ее статьи отмечены академической строгостью выводов и летучей образностью стиля. Некоторые идеи слегка отдают эпатажем, но здесь нет никакой игры на публику или стремления кого-то шокировать. Каждый вывод опутан тугими сетями аргументов. Владение материалом и свобода мышления усиливают посыл каждого текста, а неординарная образность окрыляет его. Поэтому читатель, рискнувший прогуляться по аллеям нашей музыкальной жизни вместе с этим критиком, сможет не только лучше понять состояние нашего современного музыкального процесса, но и осмыслить себя его участником, пусть даже не самым влиятельным.

К исследованию жизни и творчества Эдуарда

Айрапетяна Маргарита Рухкян приступила, опубликовав целый ряд статей. Да и самого композитора знала на протяжении многих лет, не раз писала о его произведениях, наблюдала за его творческим взлетом, поисками своего собственного пути. Казалось бы, все это должно значительно облегчить работу над книгой о нем. Это отчасти так. Но не совсем. И вот почему. Личность этого композитора, его творческое кредо, духовный облик, даже привычки, внешность, манера говорить уже давно составили для нее некую определенную и устойчивую модель. Теперь же предстояло заново сделать эту модель знакомой другим людям. И в силу этого, работая над его портретом, автору пришлось претерпеть немало душевных терзаний: что выбрать, как добиться ощущения живости, подлинности? Какими средствами передать ту простую истину, что его искусство творит свой собственный, новый, неожиданный мир? Ведь музыка этого композитора никак не укладывается в обычные стандарты. Это уникальный мир, к которому надо подобрать особый ключ. Он включает драматизм и лирику, гротеск и нежность, дерзость и юмор. Этот мир содержит конкретность и обобщение, поэзию и философию, иронию и сочувствие. И все это передается средствами особой выразительности, несущей нам ни с чем не схожую атмосферу.

Думается, не ошибусь, если скажу, что в книге М. Рухкян об Айрапетяне мы встречаемся со своеобразным синтезом музыковедения и художественной литературы. Примечательно и другое: будучи практиком театрально-концертной жизни, она судит о герое своей книги не со стороны, а словно бы проникает в тайное тайных его творчества и точным словом выражает то, что родилось и созрело у композитора в подсознании. Недаром, наверное, Авет Тертерян когда-то, прочитав рухкяновский очерк о себе, признал, что многое в его собственном творчестве стало яснее, а иное открылось заново.


Со строгим учетом творческой индивидуальности, не уравнивая, разумеется, масштабов дарования, Рухкян подходит к осмыслению творчества Эдуарда Айрапетяна, постигает присущую ему удивительную гармонию художника и человека. Подкупает просто, избегая претенциозной, наукообразной терминологии, она вводит нас в мир Айрапетяна и раскрывает его идеалы, замыслы в нерасторжимой связи с индивидуально – творческими поисками. Облик композитора, воссозданный автором, воспринимается в контексте поисков современной музыки, нисколько не теряя при этом своей неповторимой индивидуальности. Познакомить читателя с биографией композитора, дать характеристику основных жанров его творчества, предельно сжато, но емко рассказать об отдельных сочинениях, наконец, сделать обобщения о стилистических особен-

ностях, о значении Э. Айрапетяна в истории музыкальной культуры нашей страны – вот основная задача автора книги. Перед нами живо предстают вершинные достижения композитора, определяющие его вклад в историю современной армянской музыки.

“Любители музыки обычно больше интересуются классической музыкой. Современная музыка остра и часто безжалостна к слуху. Порой она просто неинтересна и несодержательна. И если современную музыку внимательно слушает аудитория большого концертного зала, это уже успех, это уже событие. Музыку Эдуарда Айрапетяна не только внимательно слушают, но и воспринимают с той степенью волнения, которое, как известно, является первым доказательством встречи с прекрасным – так характеризует творческий облик композитора автор рецензируемой книги. После премьеры Э. Айрапетяна возникает какая-то особая тишина, в которой еще звучат отзвуки музыки. Я называю эту ауру шлейфом музыки Айрапетяна. Словно в пространстве звуков готовится место, которое вот-вот будет заполнено новым сочинением композитора”...

В книге раскрываются также секреты мастерства Айрапетяна, его индивидуального языка и стиля. Привлекают внимание размышления автора, ее выводы, которые всегда актуальны. По мысли М. Рухкян, композитор, получивший широкое признание, ставший лауреатом Государственной премии Армении, никогда не будет чувствовать себя невостребованным. У него есть ясно осознанная связь с обществом, в котором он живет. Вот он и создает музыку для этого общества даже тогда, когда кажется, что его музыка этому обществу не нужна. И более того, мысль о ненужности его музыки просто не придет в голову настоящему композитору.

“Музыка, как и любовь, создает новую реальность”. Эти слова композитора Вячеслава Артемова вполне применимы и к великолепному армянскому мастеру Эдуарду Айрапетяну, о чем свидетельствует и талантливая книга Маргариты Рухкян.



НАТАЛИЯ ГОМЦЯН
//Голос Армении, 9–15, 2021

